ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«16» 11 2021 թ. Երևան № 20-Ա

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով,17-րդ հոդվածի 2-րդ մասով և 48-րդ հոդվածի 13-րդ մասով՝

Հրամայում եմ

1. Հաստատել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ **Սասուն Խաչատրյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«29» 12 2023թ. Երևան № 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 20-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հրամայում եմ

1. «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 20-Լ հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված հավելվածի՝

1) 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.1-րդ և 19.2-րդ կետերը.

«19.1. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով

պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, համալրման նպատակով անցկացվող մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով որպես մասնագետ կարող է ներգրավվել այն քաղաքացին, որը՝

1) ունի տվյալ մասնագիտությամբ Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և

2) ունի տվյալ բնագավառում առնվազն 4 տարվա աշխատանքային ստաժ կամ տվյալ մասնագիտությամբ դասավանդման առնվազն 4 տարվա ստաժ կամ գիտական աստիճան:

19.2. Սույն կարգի 19.1-ին կետով նշված պաշտոնների համալրման մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին ներգրավվում են յուրաքանչյուր բնագավառից մինչև երկու մասնագետ, որոնց ներգրավման նպատակով Կոմիտեի նախագահը դիմում է համապատասխան կազմակերպություններ կամ ուսումնական հաստատություններ՝ թեկնածուներ առաջարկելու համար: Առաջարկված թեկնածուներից մասնագետին (մասնագետներին) ընտրում է Հանձնաժողովը անդամների ձայների մեծամասնությամբ:»:

2) 22.1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի (այսուհետ՝ Հարցարան) երեք տարբերակները, բանավոր ստուգման տոմսերը, թեստավորման և բանավոր

ստուգման անցկացման պայմանները և անցողիկ միավորը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը:

Այն հարցերի ընդհանուր ցուցակը, որից ընտրվելու են թեստավորման հարցարանի երեք տարբերակների հարցերը ենթակա է հրապարակման թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման հետ միաժամանակ:

Կոմիտեի նախագահի կողմից թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի հաստատված տարբերակները, ինչպես նաև բանավոր ստուգման տոմսերը փակ ծրարներով (Կոմիտեի նախագահի կնիքով կնիքված) փոխանցվում են Հանձնաժողովին: Հանձնաժողովը թեստավորման հարցարանի տարբերակներով ծրարը բացում է թեստավորման, իսկ տոմսերով ծրարը՝ բանավոր ստուգման անցկացման օրերին մասնակիցների ներկայությամբ:»:

3) 22.1-րդ կետի 5-րդ ենթակետում «ընթացքում» բառից հետո լրացնել «թեստերի և բանավոր ստուգման միջոցով» բառերը, իսկ երկրորդ նախադասության «Թեստավորման օրը» բառերը փոխարինել «Թեստավորման ավարտման օրը » բառերով:

4) 22.2-րդ կետի 4-րդ ենթակետում «օժանդակում են թեկնածուների» բառից հետո լրացնել «(բացառությամբ պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող պաշտոնների թեկնածուների)» բառերը:

5) 22.2-րդ կետի 5-րդ ենթակետում «ժամկետում,» բառից հետո լրացնել «իսկ պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով

պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող պաշտոնները համալրող մասնակիցների դեպքում փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, այդ փուլը (փուլերը)» բառերը:

6) 22.2-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-րդ ենթակետ. '

«5.1) Առաջարկված թեկնածուներից ընտրում է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, համալրման նպատակով անցկացվող մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվող մասնագետին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրը:

Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական՝ ***Ս.Խաչատրյան***

Հավելված

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի

2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 20-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) ծառայողների (բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի) թեկնածուների ցուցակը համալրելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի կազմի մեջ՝ բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի, մտնում են Կոմիտեի նախագահի կողմից նշանակված հակակոռուպցիոն կոմիտեի երեք ծառայող, Կառավարության առաջադրած մեկ անձ, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող չհանդիսացող անձինք Հանձնաժողովում կարող են ընդգրկվել, եթե ունեն առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի երկու և գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության մեկական ներկայացուցիչ:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի ստեղծման նպատակով Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 48-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված ակտերի հաստատումից հետո՝ հնգօրյա ժամկետում, դիմում է հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակման լիազոր մարմին, գլխավոր դատախազություն և Մարդու իրավունքների պաշտպանին՝ տվյալ հանձնաժողովում ներգրավվելու նպատակով տասնօրյա ժամկետում անդամներ առաջադրելու համար:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող Մրցութային հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավումն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով:

6. Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև երեք միջազգային փորձագետ:

7. Հանձնաժողովի աշխատանքներին փորձագետների ներգրավման գործընթացն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից՝ մրցութային կարգով:

8. Փորձագետների թեկնածություն կարող են առաջադրել վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունները (այսուհետ՝ հայտատուներ):

9. Կոմիտեի նախագահը Օրենքի 48-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված ակտերի հաստատումից հետո՝ հնգօրյա ժամկետում ապահովում է հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով միջազգային փորձագետի ներգրավման վերաբերյալ հայտարարության հրապարակումը: Հայտարարությունը հրապարակվում է հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական www.azdarar.am կայքում:

10. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտը ներկայացնելու վայրը, հասցեն, հայտն ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտի ընդունման օրերը, ժամերը և հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը.

3) հայտատուներին և փորձագետներին ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

11. Հայտատուների կողմից հայտերը ներկայացվում են Կոմիտե՝ հայտարարության հրապարակմանը հաջորդող օրվանից սկսած՝ 10 օրվա ընթացքում:

12. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) կարող են հանձնվել առձեռն, ուղարկվել փոստով կամ ներկայացվել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված կամ ստորագրված և սկանավորված եղանակով: Փոստով կամ էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե դրանք հանձնվել են փոստային առաքման կամ ուղարկվել են հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ մինչև սույն կարգով սահմանված հայտերի ընդունման համար նշված ժամկետի ավարտման օրը ժամը 24:00-ն:

13. Հանձնաժողովի աշխատանքներում որպես փորձագետներ կարող են ընդգրկվել այն անձինք, որոնք հակակոռուպցիոն ոլորտում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն:

14. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել մեկ փորձագետի թեկնածություն:

15. Հայտատուները պետք է ներկայացնեն՝

1) հայտ՝ ուղղված Կոմիտեի նախագահին (Ձև 1).

2) հայտատուի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

3) հայտը ներկայացնող անձի՝ հայտատուի կողմից լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ.

4) փաստաթուղթ, որը կվկայի հայտատուի՝ վերջին երկու տարվա ընթացքում հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության մասին.

5) փորձագետի ինքնակենսագրություն (այդ թվում՝ մասնագիտական գործունեության նկարագրությամբ)՝ կցելով հակակոռուպցիոն ոլորտում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթղթեր (այդ թվում՝ առկայության դեպքում՝ գործատուի կողմից տրամադրված տեղեկանք).

6) հայտարարություն՝ փորձագետի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ կուսակցության անդամ չհանդիսանալու մասին:

16. Փորձագետի ներգրավման նպատակով Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից ստուգվում են ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը: Փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունն ստուգելուց հետո կազմվում է համապատասխան արձանագրություն: Փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հայտ ներկայացնողը դրա մասին պատշաճ ձևով ծանուցվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր) և նրան տրամադրվում է մեկ աշխատանքային օր թերությունները շտկելու համար: Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում փորձագետի ներկայացրած հայտին ընթացք չի տրվում:

17. Կոմիտեի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը փաստաթղթերն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, իսկ թերությունների առկայության դեպքում՝ հայտատուի կողմից թերությունները վերացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում ապահովում է փաստաթղթերի ամփոփումը և սույն կարգի 18-րդ կետով սահմանված եղանակով միջազգային փորձագետների՝ Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավելու գործընթացը: Եթե սույն կարգով սահմանված չափանիշներին համապատասխանում է երեքից ավելի փորձագետ, ապա նախապատվությունը տրվում է հակակոռուպցիոն ոլորտում առավել մեծ փորձառություն (առավել երկար գործունեություն) ունեցող և վերջին երեք տարիների ընթացքում միջազգային

կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում առավել շատ ծրագրեր իրականացրած փորձագետին:

18. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո, մրցույթում հաղթող ճանաչված փորձագետները ներգրավվում են Հանձնաժողովի աշխատանքներում և մեկօրյա ժամկետում մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական www.azdarar.am կայքում:

19. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա:

19.1. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, համալրման նպատակով անցկացվող մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով որպես մասնագետ կարող է ներգրավվել այն քաղաքացին, որը՝

1) ունի տվյալ մասնագիտությամբ Հայաստանի Հանրապետությունում բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և

2) ունի տվյալ բնագավառում առնվազն 4 տարվա աշխատանքային ստաժ կամ տվյալ մասնագիտությամբ դասավանդման առնվազն 4 տարվա ստաժ կամ գիտական աստիճան:

19.2. Սույն կարգի 19.1-ին կետով նշված պաշտոնների համալրման մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին ներգրավվում են յուրաքանչյուր բնագավառից մինչև երկու մասնագետ, որոնց ներգրավման նպատակով Կոմիտեի նախագահը դիմում է համապատասխան կազմակերպություններ կամ ուսումնական հաստատություններ՝ թեկնածուներ առաջարկելու համար: Առաջարկված թեկնածուներից մասնագետին (մասնագետներին) ընտրում է Հանձնաժողովը անդամների ձայների մեծամասնությամբ:

20. Հանձնաժողովը ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը, որին Հանձնաժողովի անդամներից նշանակում է Կոմիտեի նախագահը:

21. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

22. Հանձնաժողովի գործառույթներն են՝

22.1. Ինքնավար պաշտոնների թեկնածուների մրցույթի անցկացման համար Հանձնաժողովը՝

1) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

2) կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարության ձևը, ինչպես նաև մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը:

3) կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի (այսուհետ՝ Հարցարան) երեք տարբերակները, բանավոր ստուգման տոմսերը, թեստավորման և բանավոր ստուգման անցկացման պայմանները և անցողիկ միավորը, թեկնածուներին

ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը:

Այն հարցերի ընդհանուր ցուցակը, որից ընտրվելու են թեստավորման հարցարանի երեք տարբերակների հարցերը ենթակա է հրապարակման թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման հետ միաժամանակ:

Կոմիտեի նախագահի կողմից թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի հաստատված տարբերակները, ինչպես նաև բանավոր ստուգման տոմսերը փակ ծրարներով (Կոմիտեի նախագահի կնիքով կնիքված) փոխանցվում են Հանձնաժողովին: Հանձնաժողովը թեստավորման հարցարանի տարբերակներով ծրարը բացում է թեստավորման, իսկ տոմսերով ծրարը՝ բանավոր ստուգման անցկացման օրերին մասնակիցների ներկայությամբ:

4) թեկնածուների դիմումները և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ հայտը) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում համադրում է մասնակցի ներկայացրած փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը Օրենքով նախատեսված պահանջներին: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը որոշմամբ մերժվում է, և դրանք վերադարձվում են երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5) Փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է թեստավորման փուլ, որի ընթացքում թեստերի և բանավոր ստուգման միջոցով ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Թեստավորման ավարտման օրը կազմվում և հակակոռուպցիոն կոմիտեի

պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվում է թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի օրը և վայրը:

6) Թեստավորման փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

7) Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

8) Կարող է ներգրավել հոգեբանի հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համար:

9) Հարցազրույցի փուլում Հանձնաժողովի անդամները գնահատում են մասնակցի աշխատանքային ձեռքբերումները, վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողությունը, պատասխանատվության զգացումը, հաղորդակցման հմտությունները, տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և այդ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակներ և արժանիքներ: Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ արվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքներն ստուգելու նպատակ:

10) Արդյունքների ամփոփման փուլում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր մասնակցին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ:

11) Հարցազրույցի արդյունքներով կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքում առավելագույն միավորներ ստացած առնվազն 2 և առավելագույնը 6 թեկնածու

(բացառությամբ, եթե մրցույթին մասնակցել է մեկ թեկնածու): Այն դեպքում, երբ մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Մրցույթի վերջնական արդյունքները մեկօրյա ժամկետում հրապարակվում են Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

12) Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո, բացառությամբ բարեվարքության ուսումնասիրության փուլի, Հանձնաժողովը կազմում է տվյալ փուլը հաղթահարած մասնակիցների վերաբերյալ արձանագրային որոշում: Տվյալ արձանագրային որոշումն անմիջապես հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

13) Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները:

22.2. Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնների թեկնածուների մրցույթի անցկացման համար Հանձնաժողովը՝

1) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

2) Կոմիտեի նախագահի հաստատած թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցարանի հիման վրա կազմում և Կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում քննական տոմսերի տարբերակները, անցողիկ միավորը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների

բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը:

Մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցարանը ենթակա է հրապարակման թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման հետ միաժամանակ:

Թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված քննական տոմսերի հաստատած տարբերակները փակ ծրարով (Կոմիտեի նախագահի կնիքով կնիքված) փոխանցվում է Հանձնաժողովին, որն էլ Հանձնաժողովը բացում է հարցազրույցի 1-ին փուլի անցկացման օրը մասնակիցների ներկայությամբ:

3) Թեկնածուների դիմումները և կից փաստաթղթերը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում ստուգում է մասնակցի ներկայացրած փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը Օրենքով նախատեսված պահանջներին: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը որոշմամբ մերժվում է, և դրանք երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են ներկայացնողին:

4) Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնների թեկնածուների մրցույթի անցկացման համար Կոմիտեի նախագահի կողմից ձևավորվում է աջակցող խումբ, որի կազմում ընդգրկվող համապատասխան մասնագետները Հանձնաժողովի հանձնարարությամբ օժանդակում են թեկնածուների (բացառությամբ պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող պաշտոնների թեկնածուների) ֆիզիկական պատրաստականության ստուգման աշխատանքներին:

5) Ֆիզիկական պատրաստականության ստուգման փուլի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, իսկ պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական

տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ պահանջող պաշտոնները համալրող մասնակիցների դեպքում փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, այդ փուլը (փուլերը) հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է հարցազրույցի 1-ին փուլը, որի ընթացքում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը պետք է հարցազրույցն անցկացնելուց առնվազն հինգ օր առաջ հրապարակվի Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում: Տվյալ փուլի ավարտի օրը կազմվում և մասնակիցներին իրազեկվում է արդյունքների վերաբերյալ ցուցակը:

5.1) Առաջարկված թեկնածուներից ընտրում է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնների, որոնց համար պահանջվում է պաշտոնի անձնագրով սահմանված տեղեկատվական տեխնոլոգիաների կամ տնտեսագիտության կամ պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթներով պայմանավորված այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, համալրման նպատակով անցկացվող մրցույթի՝ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցազրույցի առաջին փուլի ընթացքում հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվող մասնագետին:

6) Հարցազրույցի 1-ին փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում այդ փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

7) Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, անցկացնում է հարցազրույցի 2-րդ փուլը՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով Կոմիտեի պաշտոնական

ինտերնետային կայքէջում: Այս փուլում Հանձնաժողովի անդամները գնահատում են մասնակցի աշխատանքային ձեռքբերումները, վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողությունը, պատասխանատվության զգացումը, հաղորդակցման հմտությունները, տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և այդ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակներ և արժանիքներ: Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ արվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Այս փուլում մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա մասնագիտական գիտելիքներն ստուգելու նպատակ:

8) կարող է ներգրավել հոգեբանի հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համար:

9) Հարցազրույցի 2-րդ փուլի արդյունքներով կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքում առավելագույն միավորներ ստացած առնվազն 2 և առավելագույնը 6 թեկնածու (բացառությամբ, եթե մրցույթին մասնակցել է մեկ թեկնածու): Այն դեպքում, երբ մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ցուցակն իրազեկվում է մրցույթի տվյալ փուլին մասնակցող մասնակիցներին:

11) Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստերը անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել նաև առցանց (հեռավար): Հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում են, սակայն չեն հեռարձակվում: Ինքնավար թափուր պաշտոնների թեկնածուների թեստավորման և հարցազրույցի փուլերին, մրցույթի ընթացքին հետևելու նպատակով, կարող են ներկա գտնվել դիտորդներ, որոնք, սակայն չպետք է խոչընդոտեն մրցույթի բնականոն ընթացքին, այդ թվում՝ իրավունք չունեն փաստաթղթեր կամ այլ նյութեր վերցնել, ձայնագրել, տեսաձայնագրել կամ առցանց հեռարձակել մրցույթի ամբողջ ընթացքը կամ դրա մասը, ինչպես նաև հաղորդակցվել մասնակիցների հետ: Սույն պահանջները խախտելու դեպքում Հանձնաժողովի նախագահը իրավասու է համապատասխան դիտորդին հեռացնել սենյակից՝ այդ մասին կազմելով արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են նաև հանձնաժողովի ներկա անդամները:

24. Հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա ու ժամի վերաբերյալ տեղեկատվությունը հանձնաժողովի քարտուղարի միջոցով հայտնվում է հանձնաժողովի մյուս անդամներին ոչ ուշ, քան նիստի անցկացումից 48 ժամ առաջ:

25. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը:

26. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

27. Հանձնաժողովն իր նիստերը գումարում է ըստ անհրաժեշտության, Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

28. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են գրավոր և ստորագրվում հանձնաժողովի նախագահի ու բոլոր ներկա անդամների կողմից, բացառությամբ այն անդամի, որի վերաբերյալ կայացվել է սույն կարգի 29-րդ կետով նախատեսված որոշումը:

29. Հանձնաժողովի անդամի կողմից մրցույթ անցկացնելու կարգի խախտման դեպքում հանձնաժողովը տվյալ հարցի մասին ընդունում է որոշում: Որոշման պատճենն անմիջապես ներկայացնում է Կոմիտեի նախագահին, որն իր որոշմամբ կարող է ազատել հանձնաժողովի անդամին:

29.1 Հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո՝ Հանձնաժողովը հանձնման-ընդունման ակտով Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությանն է փոխանցում մրցույթի անցկացման փաստաթղթերի փաթեթը:

Անձնակազմի կառավարման վարչությունը նյութերը պահպանում և արխիվացնում է սահմանված կարգով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

30. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

2) վարում է հանձնաժողովի նիստերը,

3) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

4) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների ու բողոքների քննարկման հերթականությունը,,

5) Կոմիտեի նախագահի համաձայնությամբ՝ իր գործառույթների իրականացումը ժամանակավորապես վերալիազորում է հանձնաժողովի այլ անդամի,

6) հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրա պարտականությունների կատարումը ժամանակավորապես հանձնարարում է հանձնաժողովի այլ անդամի,

7) իրականացնում է սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

V.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

31. Հանձնաժողովն առաջին նիստի ժամանակ ընտրում է Հանձնաժողովի քարտուղար:

32. Հանձնաժողովի քարտուղարը ընտրվում է Հանձնաժողովի կազմից՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամի անունը ներառվում է քարտուղարի թեկնածության ցանկում ինքնառաջադրման կամ անդամներից որևէ մեկի կամ մի քանիսի առաջադրման արդյունքում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե քվեարկությամբ որևէ թեկնածու չի ստանում Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ապա առավելագույն թվով կողմ ձայներ ստացած երկու թեկնածուներն անցնում են երկրորդ փուլ, որի ընթացքում լրացուցիչ քվեարկության արդյունքում ընտրվում է առավել ձայն ստացած անդամը: Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած անձին, ապա նախապատվությունը տրվում է տարիքով ավագ անդամին:

33. Քարտուղարն ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

34. Քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա ու ժամի մասին տեղեկատվության հրապարակումը,

2) ապահովում է նիստերի և այլ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանները,

3) ապահովում է Հանձնաժողովի նիստերի տեսաձայնագրումը,

4) «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով համարվում է Հանձնաժողովի աշխատանքների մասին տեղեկատվություն տնօրինող,

5) վարում է Հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը,

6) արձանագրում է հանձնաժողովի նիստերը,

7) իրականացնում է սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

35. Հանձնաժողովի անդամը՝

1) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ կարող է փոխարինել քարտուղարին, իսկ Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ Հանձնաժողովի նախագահին,

2) պարտավոր է ներկա գտնվել նիստերին,

3) մասնակցում է մրցույթի անցկացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի մշակման գործընթացին, հարցազրույցի անցկացմանը և իրավունք ունի հարցեր տալու մասնակիցներին.

4) արդյունքների ամփոփման փուլում՝ գնահատում է յուրաքանչյուր մասնակցի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ.

5) ստորագրում է մրցույթի որոշումները.

6) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.

7) իրականացնում է սույն աշխատակարգով և իրավական այլ ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

36. Մրցույթի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո, բացառությամբ բարեվարքության ուսումնասիրության փուլի, Հանձնաժողովի արձանագրային որոշումը 2 ժամվա ընթացքում տվյալ փուլը չհաղթահարած մասնակիցը կարող է գրավոր բողոքարկել հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

37. Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, կարող է դրանք գրավոր բողոքարկել հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում:

Ձև 1

ՀԱՅՏ

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում միջազգային փորձագետի ներգրավման համար հայտարարված մրցույթի

1.	Կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
2.	Գրանցման համարը, ՀՎՀՀ	
3.	Կազմակերպության կոնտակտային անձի անուն/ազգանունը	
4.	Պաշտոնը	
5.	Հասցե, հեռախոս, էլ. փոստ	
6.	Փորձագետի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	
7.	Փաստաթուղթ, որը կվկայի հայտատուի՝ հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության մասին և այդ ոլորտում իրականացված ծրագրերը, ծրագրերի բովանդակությունը, իրականացման ժամանակահատվածը, ստացված արդյունքները	

Ստորագրություն

Օր, ամիս, տարեթիվ